

ԳԱԼՈՒՍՏ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ «ՄԵԹՈԴԻ ՎՐԱ» ԳԻՐՔԸ

ՄԻՔԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Կոստանդյան գերդաստանը XIX դ. առաջին քառորդից աչքի ընկնող դեր էր կատարում 6—7 հազար մարդուց բաղկացած Զմյուռնիայի հայկական համայնքի կյանքում: Մասնավորապես բարի համբավ է թողել գերդաստանի նշանավոր այրերից մեկը՝ Գրիգոր Կոստանդյանը: Նա, ժամանակին աշակերտած լինելով Ն. Վանանդեցուն, գաղթօջախի լուսավորյալ դեմքերից էր հրատարակել է աշխարհաբար թարգմանություններ, 1843 թ. հանդես է եկել արևմտահայերեն բարելավելու, «կարգ ու կանոնի» ենթարկելու առաջարկությամբ, աշխատակցել է «Արշալույս արարատյան» թերթին՝ Գ. Կ. ստորագրությամբ, գործնական մասնակցություն է ցուցաբերել գաղթօջախի հարակալական-լուսավորական շարժմանը, հովանավորել է գիտությամբ զբաղվողներին: Գաղթօջախի առաջադեմ կին գործիչներից՝ մեկն էր Հռիփսիմե Կոստանդյանը: Նրա ջանքերով ու ծախքով 1846 թ. գաղթօջախի հրդեհից այրված դպրոցական շենքը կրկին կառուցվել ու դարձել է զմյուռնահայ աղջիկների դաստիարակության օրրանը:

Գրիգոր և Հռիփսիմե Կոստանդյանների հարկի տակ էլ 1840 թ. ծնվել է նրանց միջնեկ որդին՝ Գալուստը: Ծնողների հոգացողությամբ նա ստացել է լայն ու հիմնավոր կրթություն և տակավին պատանի հասակում հանդես է բերել բազմակողմանի տաղանդ, հոր հետ շրջագայել է եվրոպական քաղաքներում, ծանոթացել օտար լեզուների, հմտացել գրանցում: Դեռ տասնհինգամյա պատանի՝ նա հրատարակել է ականավոր եգիպտագետ Ժ. Շամպոլյոնի տախտակը¹, որով առաջին անգամ վերծանվում էին եգիպտական նշանագրերը:

Սի քանի տարի անց՝ 1858 թ., Գ. Կոստանդյանը Զմյուռնիայում հրատարակեց «Հասարակաց թանգարան» գիտական մատենաշարը (16 գրքույկ): Տարածել լուսավորություն, բնական գիտելիքներ, նպաստել հայ կյանքի առաջընթացին. հայության մտավոր զարթոնքին, նրան հաղորդակից դարձնել մշակութային այն հեղափոխությանը, որ նկատվում էր XIX դ. գիտության

¹ «Արշալույս արարատյան», 1843, № 130, 131, 146, 150, Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Բ. Ազատյանի ֆոնդ, բաժին 4, վ. 142, թ. 6—8, Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մատենադարան, ձեռագիր № 7257:

² Հրատարակվել է 1855 թ. հոկտեմբերին՝ «եգիպտական նշանագիրք» վերնագրով, «Մասիսում» արտատպված մի հաղորդումից պարզվում է, որ Ժ. Շամպոլյոնը յուր կենդանության ժամանակը անոնց (եգիպտական նշանագրերի—Մ. Հ.) տախտակներն մեկը նվիրած էր մեծահամբավ Պոդոս-պեյին, որից էլ այն անցել է Գ. Կոստանդյանին: Այսպիսով, հայտնի է դառնում, որ անմիջական կապ էր հաստատվել մեծ արևելագետի ու հայ գործիչների միջև տակավին մինչև 1832 թ.: Նույն հաղորդումը նաև վկայում է, որ Արամ Գալուստը եռսուննական զովելի ակնկալություններ կուտա... թեպետ և միայն 14 տարեկան է, բայց և այնպես արդեն 3—4 լեզվաց չրայոք հիմնական տեղեկություններ ունի» («Մասիս», 1855, № 197 և «Արեւիկը», 1855, № 8, էջ 251):

բոլոր ասպարեզներում—այսպիսի համընդհանուր խնդիր էր դնում իր առջև հազիվ 18—19 տարեկան պատանին:

Պարբերաբար հրատարակած նրա մատենաշարի գրքույկներից յուրաքանչյուրը նվիրված էր գիտության մի առանձին բնագավառի: Փաստորեն «Հասարակաց թանգարանն» արևմտահայ իրականության մեջ բնական գիտությունների բուն դնելու գարնանային ծիծեռնակն էր և արժանացել է լուրջ գնահատության³:

Բազմակողմանի տաղանդի տեր էր Գ. Կոստանդյանը: Ժամանակի մամուլում հաղորդումներ են տպագրվել այն մասին, որ նա հրատարակել է երաժշտական գործեր՝ «Զաբել», «Սաթենիկ», «Տիդրանուհի», «Զարուհի» պարեղանակները՝ պոլկա-մազուրկա⁴, գրում էր օպերա, լույս է ընծայել նաև «Սիպիլ կամ բնական գիտության պիտանի մասերուն համառոտ պատմությունը» գրքույկը⁵: Նա աշխատակցում էր «Միություն» պարբերականին, ավելի հաճախ նյութեր էր հրատարակում «Մաղիկ» հանդեսում: Գ. Կոստանդյանը մոտ էր կանգնած «Վասպուրական» թատրոնին և գաղթօջախի մի շարք մշակութային ընկերությունների, որոնցից մեկի՝ «Հաշտենիցի» անդամների թվում, ինչպես ենթադրվում է, 1861 թ. նոյեմբերի 18 (30)-ին, Զմյուռնիայում դիմավորել է Հնդկաստան կատարած ուղևորությունից վերադարձող Մ. Նալբանդյանին⁶:

Գ. Կոստանդյանը, ինչպես գրել է «Մաղիկը» 1861 թ. օգոստոսին և 1862 թ. մարտին, ընտրվել էր Փարիզի Ասիական և Մեսմերական ընկերությունների անդամ, որով դուրս գալով ազգային շրջանակից, ոտք էր դնում միջազգային յուրմտները:

Կյանքի վերջին տարիներին Գ. Կոստանդյանը հրատարակության էր պատրաստում ընդարձակածավալ հանրագիտական բառարան (անավարտ), որի քարտարանից մի անգամ չէ, որ օգտվել են զմյուռնահայ մտավորականները: Գիտական բազմազան հարցերի պարզաբանման խնդրանքով Գ. Կոստանդյանին էին դիմում Զմյուռնիայի հայկական և հունական կրթական օջախները և պարբերականները: Զմյուռնահայ մի այլ երախտավոր-լուսավորչի՝ Գ. Բաբազյանի հետ, Գ. Կոստանդյանը 1869 թ. հիմնել է «Հայ ընթերցատուն»: Դա ըստ էության եղել է գրադարան-ընթերցարան, մշակութային սրահ, գիտելիքների տարածման կենտրոն՝ միասին վերցրած, և շուրջ կես դար հայ կյանքի ու մշակույթի կաճառն էր հեռավոր Զմյուռնիայում: Գաղտնի քվեարկությամբ ընտրվող նրա ատենապետի պաշտոնում Գ. Կոստանդյանը երկար տարիներ գիտակազմակերպական լայն աշխատանք է ծավալել:

Գ. Կոստանդյանի գիտական աշխարհը չէր սահմանափակվում գրքով. նա ուներ իր լաբորատորիան, որտեղ բնագիտական որոնումներ էր կատարում, և իր դիտարանը, որտեղից դիտարկում էր տիեզերքը:

Բայց անկախ այդ ամենից Գ. Կոստանդյանի անունը կապված է գրեթե միմիայն «Մեթոդի վրա» երկի հետ, որը լույս է տեսել 1878 թ. և երևան է բերել հեղինակի համայնապարփակ գիտապաշարը, իր ժամանակի համար

³ «Արևմուտք», 1859, № 1, էջ 8:

⁴ «Արշալույս արարատյան», 1863, № 705:

⁵ «Մասիս», 1856, № 220:

⁶ Գ. Ն. Գ ա ս պ ա ղ յ ա ն, Առաջարան (Գ. Կոստանդյան, Մեթոդի վրա, Երևան, 1961, էջ 7—8):

բացառիկ բնափիլիսոփայական մտածողությունը՝ հիմնված մատերիալիզմի վրա⁷:

Գրքի հենց բնաբանը ցուցահանում է նրա հենքն ու դրոշը՝ «Հառաջադիմություններ գիտությանը»: Դա էր նաև Գ. Կոստանդյանի նշանաբանը գիտական ամբողջ կյանքում: «Երկար տարիներու զննութենն ու մտածողութենն հետքը» հրապարակ հանած իր երկի հենց առաջին տողերում նա ազդարարում է, որ «մեծ ու անօրինակ» է XIX դ., որովհետև «նոր ու սկայագեղ» մի տեսարան է նա բացել մարդու առջև՝ «գիտությանց հանդեսը ...յուր վսեմ ու դարավոր շարունակությանը մեջ», «հանդուժ մը, որ ամեն ինչ առած կտանի դեպի հանրային ու աննախորդ քաղաքակրթության մը սահմանները»⁸:

Այդ ելակետից էլ Գ. Կոստանդյանը հետևում է «մարդկային հանճարի» անցած ուղուն, քննում նրա ճամփան (հունարեն մեթաֆորա բառի արմատն ունի «ճամփա» իմաստը): Բարդ ու արտակարգ դժվարին խնդիր էր դա, որ նա կատարել է ամենայն հաջողությամբ: Անխուսափելիորեն դիմելով խոշոր հեղինակություններին, նա, այդուհանդերձ, կարողացել է պահպանել իր ինքնուրույնությունը, ստեղծել է մի երկ, որը եզակի տեղ է գրավել հայ հասարակական մտքի պատմության մեջ, դարձել է հայ փիլիսոփայության անկյունաքարային աշխատություններից մեկը՝ պատմա-մշակութային իր նշանակությունը պահպանելով նաև այսօր: XIX դ. 60—70-ական թվականներին կատարելով մտավոր հսկայական թռիչք և հանգելով մատերիալիստական աշխարհայացքին, Գ. Կոստանդյանը մեզանում հաստատեց «նյութապաշտ դպրոց», դարձավ խորապես համոզված մարտնչող աթեիստ, աստծուն համարեց «խավարի ակունք», հերքեց երբեք «լույս չտված» իդեալիզմը:

Գ. Կոստանդյանի աթեիզմն էլ հենց ցնցեց հայ իրականությունը:

Արձանագրելով, որ հավատական շրջափուլը մտքի պատմության մեջ առաջընթաց քայլ էր, Գ. Կոստանդյանը միաժամանակ ընդգծեց, որ «անոր վնասները անհաշվելի են», նրա արատներն անբուժելի: Կույր հավատը, որ նրա հիմքն է կազմում, ծնել է կրոնը, իսկ սա էլ իր հերթին ստեղծել է եկեղեցին՝ իր «ավելորդ ու շինծու» վարդապետություններով, «անշարժ ու անփոփոխ դոգմերով»: Ըստ Գ. Կոստանդյանի «կրոնի երևակայած խորհուրդները՝ մարդերն շինված են», կրոնական վերնախավերի սկզբունքն է «ծոռովուրդը տգիտության մեջ պահել՝ առ երեսս բարոյականի պատրվակավ և ի ներքուստ՝ իրենց շահին համար», «սեւք, աչք, ականջ, հոտառություն, քիմք, ականջ, խելք տված են մեզի, քան թե մարդկության հազարավոր աստվածները...»⁹: Նա «սրբազան անբարոյականություն» էր համարում ժողովրդին անոթի թողնել, իսկ նրա վաստակածով երկրի վրա աստծո տներ կառուցել:

Հռչակելով այն ճշմարտությունը, որ «մարդս երկրային ծնունդ» է, Գ. Կոստանդյանը նրան ազատեց աստծո ստեղծած էակը լինելու դարավոր ծանրությունից՝ նրա պարտքը համարելով աշխատանքը, ստեղծագործելը:

7 Գ. Կոստանդյան, Մեթոդի վրա, Իզմիր, 1878, 163 էջ:

8 Գ. Կոստանդյան, Մեթոդի վրա, Նրեան, 1961, էջ 59:

9 Նույն տեղում, էջ 156, 159, 175:

միտք ու հմտություն գործադրելը և «կրցածին չափ աշխարհս բարեւալելը»։ Կրոնը, առանձնապես քրիստոնեությունը, կեղծիք է։ Նա «անոթի, մերկ, բութիկ ու տգետ» է պահում ժողովրդին, «որպեսզի շարթըննա» ու եկեղեցու դեմ չըմբոստանա։ Իր գոյությունը նա պահպանում է տիրող բռնության ու «ռամիկի տգիտության» շնորհիվ։ Ու որքան հանցավոր են կրոնավորները, նույնքան հանցավոր է և կրոնը։ Նրանք անբաժանելի են միմյանցից ու «միշտ միատեղ կգտնվին»։ Հերքելով կրոնը, գիտությունն անդամադրելիորեն գալիս է փոխարինելու նրան, հաստատվելու իր արարչական դերում, ամեն ինչ ստեղծելու և մարդկության առաջընթացն իրենով պայմանավորելու անկասելի առաքելությամբ։ «Անողորմ ու անհաշտ» է գիտությունը. «Ուսումնական պատերազմում» հաղթանակելով՝ նա կգա ու պետք է «տիրե գերիշխան»։

Խիստ ուղղագիծ է Գ. Կոստանդյանի սխեման. «ուսումնական պատերազմի» մեջ միակ ու գլխավոր դերը հատկացնելով սնոտիապաշտությունից ու թյուրատեսությունից ազատագրված մարդուն և գիտությունը դիտելով իբրեւ ամենակարող զենք ու միջոց, նա չըմբռնեց մի այլ էական ճշմարտություն՝ ո՛ւմ ձեռքում է գիտությունը և ո՛ւմ է այն ծառայում։ Նրա այդ «թյուրատեսությունն» էլ իր արմատն ունեւր. Գ. Կոստանդյանը չի տեսել նաև, թե ո՛ւմ է ծառայում կրոնը, ո՛րն է նրա կենսունակության դասակարգային հիմքն ու հենարանը։ Այդ էլ հենց նրա արմատական սահմանափակությունն է, որի տեսական արմատն իր հերթին սնվում էր Օ. Կոնտի պոզիտիվիզմից, նրա փիլիսոփայությունից։ Դրանից Գ. Կոստանդյանը մինչև վերջ էլ չազատագրվեց։ Կ. Մարքսի «Կապիտալը» վկայակոչելով հանդերձ, Գ. Կոստանդյանն անհաղորդ մնաց մարքսիզմին։ Հայ իրականության մեջ մեծ ու կարևոր առաջընթաց կատարելով հանդերձ, նա չբարձրացավ և բնականաբար չէր էլ կարող բարձրանալ արևմտահայ դասակարգային միջավայրից, այն հասարակական մթնոլորտից, որ տիրում էր Թուրքիայում 1860—1870-ական թվականներին։

Սակայն Գ. Կոստանդյանի՝ դեպի ապագան ուղղված հայացքի առջև ուրվագծվում էր գիտության լայն ասպարեզը, գիտություն, որի շնորհիվ, ինչպես խորապես համոզված էր նա, կլուծվեն բոլոր հարցերը և մարդկությունն իրականացած կտեսնի իր երազանքը։ Մարդու ճանաչողության շրջափոխության բոլոր «նախորդ էտապներին» տրամագծորեն հակադիր ուղիով ընթանալով, գիտությունը տանում է դեպի «ճշմարտություն, իրողություն և հառաջդիմություն»¹⁰։ Ի դեպ, Գ. Կոստանդյանի հռչակած այս գաղափարը զմյուռնահայ մամուլի էջերում արժարժվում էր տակավին 1840-ական թվականների սկզբներին. գիտությունը «աշխարհիս բարեկրթության ու լուսավորության հիմն է», — գրել է «Հայրենասեր» թերթը 1843 թ. մայիսի 28-ին լույս տեսած իր անդրանիկ համարում։

Գիտության ընդհանուր առաջադիմությունը նկատի առնելով, Գ. Կոստանդյանը հռչակում է, թե ինչ մեծ ու արմատական փոփոխություն, որ եղած է, ինչ մեծ ու գեղեցիկ ճշմարտություն, որ գտնված է, ամենքն ալ այս մեթոդի կպարտավորինք, և միայն անոր»։ Նրա արդյունքն են բոլոր «հանրօգուտ ու տիեզերական ճշմարտությունները»։ Գիտական նորությունները, գյուտերը, «ամեն օր աշխարհս» հարստացնում են, «բոլոր քաղաքա-տնտե-

¹⁰ Նույն տեղում, էջ 60։

սակա՛ն ազատութեանց հաստատութիւնը՝ դիտական ճշմարտութիւններու հետևութիւնը եղած է միշտ և ոչ ավելի»։ «Ի՞նչ չըրավ և դեռ ի՞նչ չպիտի ընեն» ինդուստրիան, հարցնում է Գ. Կոստանդյանը կրկին փառաբանելով գիտութեան «անհաշիւ» օգուտները մարդկութեանը¹¹։

Դրա համար էլ, ըստ Գ. Կոստանդյանի, ամենագլխավոր խնդիրը, «գերագույն պարտքը պետք է ըլլա՝ նախ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ», ապա և «ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԵԼ, սփռել՝ գրքերու, օրագիրներու, դպրոցներու և մանկավարժային նոր մեթոդներու միջոցով»։ Դրանք ամենն սրբազան ու վեհ պարտավորութիւններն են», ըստ որում «գիտական մեթոդը մեկ է, անողոք ու անհաշտ, և ուսումնական պատերազմը կշարունակվի և դեռ պիտի շարունակվի, մինչև որ բոլոր մյուս դրութիւնները իյնին խորտակվին ու գիտութիւնը գա և տիրե գերիշխան... Այս մեծ ու տիեզերական պատերազմը այնպես ըրած է, որ ուշ կամ կանուխ՝ հաղթութիւնը ավելի շիտակ մտածողին ու ավելի շատ աւտագրողին պիտի մնա»։ Աշխարհիս ապագան «գիտական ու տնտեսական քաղաքակրթութիւնն է», ամեն մեկու երջանկութիւնը՝ բոլորի երջանկութեան մեջ հաստատելով, Կոստանդյանը, ազգութիւնը և պատերազմները՝ տնտեսապես ու գիտապես դադարեցնելով¹²։

Նոսքն ուղղելով «մեր նոր սերնդին», Գ. Կոստանդյանը կոչ էր անում. «Ժ. Դ. ...մեծ դար մ'է անշուշտ, բայց ավելի մեծ դար մը պիտի ըլլա այն, որ անոր հաջորդելու կուգա։ Քսաներորդ դարու նշույնները արդեն կերկին, ուր շրջափոխութեան փիլիսոփայութիւնը պիտի տիրե՝ ընկերային գիտութեանց նորանոր լույսեր բերելով։ Մենք այն դարը չտեսնենք կարելի է, բայց մեր զավակները պիտի տեսնեն։ Աշխատինք ուրեմն զանոնք հիմնական պատրաստելու, դաստիարակելու ու միացնելու այն գեղեցիկ դրոշի ներքե, ուր քրված է՝ ՀԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏՈՒԹՅԱՄԲ»¹³։

Որքան էլ լավատես էր Գ. Կոստանդյանը, սակայն, չհասավ դասակարգային պայքարի ըմբռնման աստիճանին, չտեսավ այն հզորագոր իրական ուժը, որ զալիս էր աշխարհը վերափոխելու՝ բանվոր դասակարգին և նրա հեղափոխական պայքարը։ Չմոռանալով այդ, նաև պետք է նշել, որ բնագետ-փիլիսոփայական կանգնած է անցած դարի հայ նշանավոր մտածողների ավանգարդում։ Սկսելով իդեալիզմից, նա քսանամյա իր որոնումների ընթացքում հասել է մարտնչող աթեիզմին ու մատերիալիստական ըմբռնմանը և «Մեթոդի վրա» գրքով կայուն տեղ է գրավել հայ հասարակական-գիտական մտքի պատմութեան մեջ։

Չափազանց խոստուն են նաև Գ. Կոստանդյանի և նրա գրքի հետագա ճակատագիրը։ Գրքի թարմ հետքերով «Արևելյան մամուլի» խմբագիր Մ. Մամուրյանն իր հանդեսում հրատարակեց հոդվածաշար, որտեղ երկարորեն քննում ու քննադատում էր «Մեթոդի վրա» երկը՝ որպես իր «նյութովն ու ձևովն ազգին [ոչ] պիտանի», իսկ նրա հեղինակին համարում էր «գիտութեան բռնակալ մը», Օ. Կոնտի ու է. Լիթրեի հետևորդ¹⁴։ Գ. Կոստանդյանի գիրքը համարելով «հանկարծակի պայթող ռումբ», Մ. Մամուրյանը, ի դեպ, հեղի-

¹¹ Նույն տեղում, էջ 174, 176, 179։

¹² Նույն տեղում, էջ 184, 185, 186—187։

¹³ Նույն տեղում, էջ 189։

¹⁴ «Արևելյան մամուլ», 1878, հունիս, էջ 76—77, շաբաթ, էջ 125—133, սեպտեմբեր, էջ 198—201, դեկտեմբեր, էջ 323—327, 1879, հունվար, էջ 342—347։

նակին մեղադրում էր նաև այն բանի համար, որ նա չի նշում ազգի վերքերը բուժելու «բուն դարմանը»: Իր հերթին «Արշալույս արարատյան» թերթը փափագում էր, որ «Մեթոդի վրա» գիրքը իրօրինակ գրքերի մեջ վերջինը լինի և մինչև անգամ գտնում, որ հայոց պատրիարքարանը պետք է դիմի Բարձրագույն Դռանը և նրա միջոցով պատժի Գ. Կոստանդյանին և նրա գրքի հրատարակությունը¹⁵:

Արևմտահայ մամուլի էջերից հայտնի է նաև, որ պատրիարքարանը բանադրանքի է ենթարկել Գ. Կոստանդյանի գիրքը. այրել նրա օրինակները: Տարօրինակ է, որ Գ. Կոստանդյանի դեմ առանձին գրքուկով հանդես եկավ նաև դեմոկրատ հրապարակախոս Ս. Ոսկանյանը¹⁶, որը դեռևս 1855 թ. և 1859 թ. ջերմությամբ էր արձագանքել նրա հրատարակություններին: «Օգյուտստ Կոնստը Զմյուռնիայում և անաստվածություն» խորագրով ֆրանսերեն իր բրոշյուրում նա ուղղակի դատափետում էր Գ. Կոստանդյանին, նույնիսկ գտնում, որ նա զուրկ է ինքնուրույնությունից: Ս. Ոսկանյանի այդ մարտնչությունն արժանացավ Զմյուռնիայի լատինական եկեղեցու առաջնորդի հատուկ շնորհակալական նամակին, որը թարգմանաբար լույս տեսավ մամուլում¹⁷: Արքեպիսկոպոսը դրվատնելով Ս. Ոսկանյանի տաղանդը, նրան կոչ էր անում իր պամֆլետը հրատարակել նաև հայերեն: Սակայն Ս. Ոսկանյանը հայերեն որևէ խոսք չհրատարակեց Գ. Կոստանդյանի դեմ: Հետագայում դա արեց ամբրիկյան միսիոներների պարագլուխ Ժ. Վուտը՝ «Քննություն Մեթոդի վրա անուն գրքուկին»¹⁸. Գ. Կոստանդյանի վրա թափելով եկեղեցու անեծքը, նա խոսքն ուղղում էր առ «ուսումնասեր և ողջամիտ հայ երիտասարդս»՝ նպատակ ունենալով նրանց զերծ պահել «վտանգավոր» ազդեցությունից: Ժ. Վուտը նույնիսկ սպառնում էր հայությունը, եթե Գ. Կոստանդյանի և նրա գրքի դեմ միջոցներ չձեռնարկվեն: Ի պատասխան Գ. Կոստանդյանի այն դրույթի, որ «հուսալ, թե կարելի է տակավին կրոնը գիտության հոդել ու ճավառաբանությունը մը գալ՝ կնամանի ուղտը երկաթուղիին կապելու... և կամ երեկը այսօր ընելու»¹⁹, միսիոները քարոզում էր, թե իբր «Քրիստոս... է միակ հույս աշխարհի բարոյական զարգացման»²⁰: «Մեթոդի վրա» գրքի դեմ հանդես եկավ նույնիսկ Թիֆլիսի ներսիսյան դպրոցի դասախոս Ս. Մանգինյանը: Գրքի անլեզալ ընթերցանության համար սովորող երիտասարդները խստորեն պատժվում էին: Բանը հասավ այնտեղ, որ Գ. Կոստանդյանը համարվեց ազգուրաց:

Առաջին անգամ չէ, որ Գ. Կոստանդյանը հալածվում էր. 1860 թ. նույնպես նա մեղադրվում էր իբրև «գաղտնի գործակից», «ազատական»: Ազատախոսության մասին մամուլում հրատարակած մի հոդվածի համար, մինչև անգամ «բարեկամների» կողմից Գ. Կոստանդյանն այնպես է քարկոծվել, որ ստիպված է եղել մի ամբողջ տարի կղզիանալ: Երբ նա սկսեց կրկին հանդես գալ «Ծաղկի» էջերում, իր առաջին խոսքով թույլ տված սխալի համար հրա-

¹⁵ «Արշալույս արարատյան», 1878, № 1095:

¹⁶ E. Oscan, Auquste Conte a Smyrne et l'Athéisme, Smyrne, 1878, 35 էջ:

¹⁷ «Արշալույս արարատյան», 1878, № 1104:

¹⁸ [Ժ. Վուտ], Քննություն Մեթոդի վրա անուն գրքուկին ուղղյալ առ ուսումնասեր և ողջամիտ հայ երիտասարդս, Կ. Պոլիս, 1882, 122+15 էջ:

¹⁹ Գ. Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 186—187:

²⁰ [Ժ. Վուտ], նշվ. աշխ., էջ 114:

պարակալ ներում խնդրելու հետ միասին, ազդարարեց այն մասին, որ «այս օրվանն կսկսի մեր մուտքը հայ ասպարեզին մեջ»²¹։ Քիչ անց, հանդեսի 1861 թ. նույեմբերյան համարում նա կրկին իր նախկին կտրուկ տոնով էր հանդես դալիս և իրեն հայտարարում ազատականների բանակից, համոզմունք հայտնում, որ ազգի ապագայի ջահը «արդի հայ երիտասարդությունը պիտի ըլլա», որ զնդանն ու շղթաներն անզոր են պարտության մատնելու ճշմարտությունը, իրավունքը, արդարությունը²²։

Գ. Կոստանդյանը մանկուց սիրում էր նաև թարգմանություններ կատարել։ «Թուֆակ հայկազյան» մանկական ամսատետրակում, որ հրատարակվում էր Մեսրոպյան վարժարանի սաների ջանքերով, 1855 թ. մարտին, նա հրատարակել է «Նշանախոս վարժապետ» խորագրով զրույցը՝ թարգմանված անգլերենից, «Ա. Գալուստ Գ. Կոստանդյան» ստորագրությամբ²³։ Հետագա տարիներին նույնպես նա մերթ ընդ մերթ թարգմանություններ էր տպագրում «Արշալույս արարատյան», «Մաղիկ» և այլ պարբերականների էջերում։ Հատկապես ուշագրավ է, որ նա Զեյթունի ապստամբությունից ոչ շատ առաջ՝ 1862 թ. ապրիլ-մայիսին «Մաղիկ» հանդեսի համարներում ընթերցողներին է ներկայացրել Ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ-գիտնական Վ. Լանգուաի «Ի Կիլիկիա և ի Տավրոս» ուղեգրության թարգմանությունը՝ իր մի շարք ծանոթագրություններով, հեղինակին համարելով «արգո և գիտնական անդամակից»։ Այդ գործի թարգմանությունը և տպագրությունը նա բացատրում էր հայրենիքի նկատմամբ ունեցած սիրով²⁴։

Ինչնով կայուն սկզբունքի տեր՝ «երբեք չըսած է խոսք մը՝ չըրած է գործք մը», ինչպես վկայում է նրա երկարամյա մտերիմը՝ Մ. Նուպարյանը²⁵, և լիովին տրվելով գիտությանը, Գ. Կոստանդյանը դրանով իսկ քաղաքացիական խիզախության էր դիմում։ Բանն այն է, որ մինչև XIX դ. կեսերը և դրանից էլ շատ տարիներ հետո արևմտահայ իրականության մեջ հազիվ մեկ-երկու հոգի էին խիզախում գիտությամբ զբաղվել։ «Մեր մեջ գիտություն կարողացող և հասկցող չկա», — գրում էր «Մաղիկը» 1864 թ. օգոստոսին, ապա նկատում, որ «19-րդ դարը հայերուն համար տակավին չորեքտասաներորդ դարն է։ Պետք է որ հայության 17 և 18 դարերն ալ գան հասնին և մտքի տապարով քանդեն նախապաշարումներու և մոլություններու շենքը»²⁶։ Ամբողջ կյանքն ու ինչքը գիտությանը նվիրելով և այն դարձնելով իր «ամենամեծ զբաղումը», Գ. Կոստանդյանը, իրոք, ցուցաբերում էր «սխրալի տիպար մը» (Մ. Նուպարյան) և ըստ էության կենդանի իրագործումն էր «Մաղիկի» հռչակած այն գաղափարի, թե «մեր օրերը միտքը՝ իբր զենք՝ տգիտության հետ կպատերազմի»։

«Մեթոդի վրա» գիրքը Գ. Կոստանդյանի ձեռնարկած մի ամբողջ մատենաշարի առաջին հատորն էր միայն, կարելի է ասել սոսկ ներածությունը, որը նա հրապարակ էր հանել՝ գիտակցելով հանդերձ նրա պակասավոր կողմերը,

21 «Մաղիկ», 1861, № 10, էջ 75։

22 Նույն տեղում, 1861, № 15, էջ 114—115, տե՛ս նաև Գ. Ն. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 8։

23 «Թուֆակ հայկազյան», 1855, № 3, էջ 38—40։

24 «Մաղիկ», 1862, № 29, էջ 246—247, № 30, էջ 252—254, № 32, էջ 268։

25 «Արևելյան մամուլ», 1902, № 9, էջ 401—411։

26 «Մաղիկ», 1865, № 109, էջ 373։

հարկադրաբար շատ խնդիրներ սոսկ շոշափելով, առավել ևս «բազմադիմի պարագաների» ճնշմանը ենթակա լինելու հեռանկարը չանգիտանալով: Նրա ծրագիրն էր «Արևելյան գիտական մատենաշարով» լայնատարած կերպով պրոպագանդել գիտությունները, փիլիսոփայական ուսմունքը, բնագիտության նվաճումները:

Վկայում են, որ Կոստանդյանը հրատարակել է նաև մի շարք ֆրանսերեն գրքույկներ «Օրիան» ընդհանուր խորագրով, որ նա «սկսավ ֆրանսերեն գրել... տասնհինգ տարվան միջոց մը», որ իր «Անսիկլոպետինը» նույնպես ֆրանսերեն էր գրում: Մասնավորապես ուշագրավ է այն հաղորդումը, որ Գ. Կոստանդյանի «արևելյան գիտություն, սովորություն և ավանդություն» վրա՝ «Օրիան» տետրակներից «առաջին թերթը» (գրքույկը) առանձին տպվելուց հետո արտատպվել է ֆրանսիական օրագրերում, այդ թվում «Ժուռնալ տիվ մանեթիս» պարբերականում²⁷: Ցավոք, ֆրանսերեն հրատարակված այդ տետրակներից որևէ մեկը դեռևս ի հայտ չի բերված և դժվար է դրանց մասին դատել:

Կապ ունենալով ֆրանսիական պոզիտիվիզմի «ձախ» թևի պարագլուխ, ակադ. է. Լիթրեի հետ, Գ. Կոստանդյանը նրան տեղյակ դարձրեց նաև այն հալածանքի մասին, որին ենթարկվում էին իր գիրքն ու ինքն անձնապես: Մինչ հայկական ռեակցիան դատափետում էր Գ. Կոստանդյանին, Փարիզից է. Լիթրեն պաշտպանության ձեռք էր պարզում զմյուռնահայ նեղ միջավայրում գործող բնագետ-փիլիսոփային՝ հանձին նրա գործունեության նկատելով պոզիտիվիզմի թափանցումն Արևելք: Նա պոզիտիվիստական իր հանդեսի 1878 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի համարում հրապարակեց Գ. Կոստանդյանի ծրագիրը՝ «Գիտական պրոպագանդ արևելքում» խորագրով²⁸:

Առավելագույն սեղմությամբ շարադրելով իր ծրագիրը, Գ. Կոստանդյանը ֆրանսիական գիտական հանդեսում ազդարարում էր Արևելքի մեծ զարթոնքը, արևելյան ժողովուրդների վերածնության նոր դարաշրջանը, կանխատեսում նրանց «լավագույն ապագան», ուղիներ էր որոնում «սոցիալական այդ մեծ փոխակերպումը փութացնելու և դյուրացնելու համար»: Նա համոզված էր, որ «նորից և միշտ գիտական կրթությամբ կարելի կլինի լուսավորել մասսաներին, մաքառել մոլեռանդության դեմ և քիչ թե շատ ներդաշնակություն ստեղծել իրար բզկտող զանազան ցեղերի մեջ»: Հարկավոր է պոզիտիվ ճշմարտություններ տարածելով «գրոհել շարիքի արմատի վրա»՝ «ժողովրդի ազդեցության» դեմ: Դա է «մեծ շարիքից» ազատվելու ամենակարճ ճանապարհը, նաև ամենաներգործող միջոցը²⁹:

Ինտերնացիոնալիստական մեծ խնդիր հետապնդելով, Գ. Կոստանդյանն առաջ է քաշում «մարդասերների մի ընկերություն» հիմնելու գաղափարը, երևան է հանում իր մտահղացումը՝ հայերեն հրատարակելուց հետո «Արևելյան գիտական մատենաշարը» լույս ընծայել նաև այլ լեզուներով, իր նպատակը՝ զբաղվել դարի առավել խոշոր պրոբլեմներով, մասնավորապես սոցիալական գիտությամբ: Ժողովուրդներին «վճռական հաղթանակին նախա-

²⁷ «Մասիս», 1856, № 220, «Արևելյան մամուլ», 1902, № 9, էջ 402:

²⁸ «La philosophie positive Revue», 1878, № 2, էջ 304-306:

²⁹ Գ. Կոստանդյանի ծրագրային հոդվածը մենք հրապարակել ենք «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում (1971, № 1, էջ 147-148):

պատրաստելու համար» Գ. Կոստանդյանը «տգետ ու տանջված մարդկության անունից» դիմում է բոլոր նրանց, ովքեր «աշխատում են մարդու ազատագրման համար»: «Արեւելյան ժողովուրդները,— գրում է նա իր ծրագրային հոդվածում,— մոտենում են վերածնության այն ժամանակաշրջաններից մեկին, որ հատկանշվում է սոցիալական խոր փոփոխություններով. ոչինչ ավելի լավ չէին կարող դուրացնել այդ փոխանցումները, քան սոցիոլոգիական ուսումնասիրությունները՝ մասսաների մեջ պրոպագանդելով մարդկության զարգացման օրենքների պոզիտիվ գաղափարները»:

Փոքր-ինչ հետո հանդեսի խմբագրին հղած նամակում նա ավելի կոնկրետ ու հստակ է արտահայտում իր նպատակը. «Իր աշխարհագրական դիրքով,— նկատում է նա,— Զմյուռնիան կոչված է քաղաքակրթիչ դեր խաղալ ամբողջ Փոքր Ասիայում», պայմանները հնարավորություն են տալիս, «որ քաղաքը դառնա մտավոր գործունեության և Արեւելքի ու Արեւմուտքի միջև մտքերի փոխանակման օջախ»³⁰: Այս տողերը, առաջադրված ծրագիրը, դրանց մեջ արտացոլված աւտրոպիզմը նորից վկայում են Գ. Կոստանդյանի լայն մտահորիզոնի, ոչ միայն իր ազգի, այլ նաև մյուս ժողովուրդների ճակատագրով նրա մտահոգվածության, նրանց վիճակը թեթևացնելու ելք որոնելու ձգտման մասին:

Դա նրա գաղափարախոսության մեջ նոր երանգ չէր. դեռ 1860-ական թվականներին սպիրիտուալիզմի (ոգեփիլիսոփայության) դիրքերից հանդես գալով հանդերձ, նա գտնում էր, որ «հայոց համար ժԹ՝ դարս՝ միջին դար» է և ծառանում էր «հին կարծիքներու տեր հայերի» դեմ, նկատում, որ հինը «ոգեվարք է ապրում, այսօր վերջին փրփուրները» թափում և որ նորը «կհրճվի ապագային»՝ պարզելով ազատության դժոռը և պաշտպանելով այն:

Նոր չէր նաև Գ. Կոստանդյանի առաջարկը՝ ստեղծել ժողովրդի մեջ գիտելիքներ տարածող ընկերություն: Գիտելիքների պրոպագանդման նրա ծրագրի սաղմն ավելի կոնկրետ ձևով առկա է «Հասարակաց թանգարանի» նախաբանում: «Ազգերն իս լուսավորելու գլխավոր միջոցներն են մեկն ալ պետք է ճաննանք գիտնական, արվեստական, մանավանդ երկրագործության, այգեգործության և ասանկ պիտանի արհեստներուն վրա կատարելապես տեղեկություն տվող գրքերուն ազգին ձրիարար նվիրվիլը—երանի թե այսպիսի նպատակով ընկերություն մը կազմվեր և շարունակվի»³¹: Այդ ժամանակներից սկսած էլ նա հոգ էր տանում հայ գիտական լեզվի ու տերմինաբանության մշակման համար և ամբարել էր «հայերեն նորակերտ բառերու ահագին մթերք մը»³²:

Է. Լիթրեն, բնականաբար, խանդավառությամբ է արձագանքել Գ. Կոստանդյանի ծրագրին, ոչ միայն հրատարակել, այլև այն ուղեկցել է բնորոշ նախաբանով, որտեղ խոստանում է նաև աջակցել նրան: Ավելին. նա իր հանդեսի 1879 թ. մարտ-ապրիլի համարում հանդես եկավ հատուկ հոդվածով՝ «Յոգյուստ Կոնստ Զմյուռնիայում»՝ ընդդեմ Ս. Ռսկանյանի ու նրա պաշտիտի և ի պաշտպանություն «Մեթոդի վրա» գրքի ու նրա հեղինակի³³: Կտրուկ է

³⁰ Գ. Կոստանդյանի նամակից քաղվածք է բերում է. Լիթրեն («La philosophie positive Revue», 1879, № 5, էջ 313—317):

³¹ «Հասարակաց թանգարան», Զմյուռնիա, 1858, էջ ԺԱ:

³² «Արեւելյան մամուլ», 1902, № 9, էջ 404:

³³ «La philosophie positive Revue», 1879, № 5, էջ 313—317:

է. Լիթրեի խոսքը թե՛ առաջին և թե՛ մանավանդ երկրորդ դեպքում: «Պր. Կոստանդյան»-ին արժանի է քաջալերման և պաշտպանության,— դրել է է. Լիթրեն:— Իմ կողմից ես չեմ զլանա, ես նրան կպարգևեմ մեր հանդեսի աջակցությամբ, և կցանկանայի նրա համար գիտական կապեր գտնել, որ օգնեին նրա ձեռնարկմանը և մեծացնեին գործողության իր կենտրոնի ուժը»³⁴:

Այդպիսով, Գ. Կոստանդյանի գիրքը, նրա ծրագիրը միջազգային հնչեղությամբ են ստանում և ֆրանսիացի ականավոր գիտնականի ու լայն տարածում ունեցող նրա հանդեսի պաշտպանությանն արժանանում: Միաժամանակ է. Լիթրեն Գ. Կոստանդյանի նախաձեռնության առթիվ արտահայտում է իր վերաբերմունքը արևելյան ժողովուրդների, նրանց թվում նաև հայերի վիճակի և ապագայի շուրջը, քննադատական վերաբերմունք է հանդես բերում Թուրքիայում տիրող կարգերի նկատմամբ: «Ընշման և հափշտակության դեմ պաշտպանվելու համար,— իր կարծիքն է հայտնում է. Լիթրեն,— ուայաները, այսինքն՝ զանազան դավանանքների քրիստոնյաները. ամփոփվեցին կրոնական զգացմունքներում, որը, այդպիսով, դարձավ նրանց հայրենասիրության գազաթնակետ... Բռնության լուծը թեթևացնելու կամ ճգմվելու համեմատ՝ հայրենիքի սերը և կրթվելու ցանկությունը ավելի վառ կդրսևորվեն»³⁵:

Պայքարը «Մեթոդի վրա» գրքի շուրջը, պայքար, որ ժամանակակիցների վկայությամբ փոթորիկ էր, վերոհիշյալով չավարտվեց: Պարտք չմնալով է. Լիթրենին, Ս. Ոսկանյանը հանդես եկավ մի նոր գրքուկով՝ «Պր. է. Լիթրեն և անաստվածությունը» խորագրով, դարձյալ ֆրանսիացիներին³⁶: Այս անգամ նա պաշտպանում էր կրոնը, հավատքը, որովհետև, ինչպես գրում էր Ս. Ոսկանյանը, հայ ժողովուրդը այլ պաշտպան ու հենարան չունենալով, ստիպված փարվել է եկեղեցուն, որը նրա համար դարձել է կենտրոնաձիգ ուժ, փրկել է ամենազարհուրելի կատակելիքներից: Այս առումով էլ Ս. Ոսկանյանը մերժում է Գ. Կոստանդյանի աթեիզմը և է. Լիթրենին, որ կանխատեսում ու ավետում էր կրոնական հավատքի փոխարինումը գիտական աշխարհայեցողությամբ:

Է. Լիթրեի ելակետով, բայց ճշգրտական փոփոխությունների սկզբունքներով և կարծիքներով խանդավառ հարած և անոնց ծավալում են դրական օգուտ ու լուսավորություն ակնկալող գիտունը», ինչպես Գ. Կոստանդյանին բնորոշել է Մ. Նուպարյանը նրան նվիրած դիմանկարում³⁷, մեծ վստահությամբ էր հետևում իր որդեգրած գաղափարներին, հիմնավորում դրանք: Նվ նա դա անում էր որպես «սիրահար մ», որ հափշտակված, խելքը, միտքը տված իր սիրո առարկային՝ անոր մասին որևէ դիտողություն մ' իսկ լսելու անհոժար կգտնվի»՝ նույնիսկ բարեկամների կողմից³⁸:

Ժամանակակիցները նաև կարծիք են հայտնել, թե իբրև Գ. Կոստանդյանի գաղափարախոսությունը վաղահաս էր արևմտահայության համար, թե իբրև

³⁴ Նույն տեղում, էջ 317:

³⁵ Նույն տեղում, էջ 316:

³⁶ E. Oscan, M. E. Litte et l'Athéisme, Smyrne, 1879, 31 էջ:

³⁷ Մ. Նուպարյան, Գալուստ Կոստանդյան (անձնական հիշատակներ), «Արևելյան մամուլ», 1902, № 9, էջ 401—411:

³⁸ Նույն տեղում, էջ 405:

հայ միտքը նախապատրաստված չէր ընկալելու և հետևելու նրան: Ինչ որ տեղ գա թերևս անհիմն չէ ու կարծես թե Գ. Կոստանդյանի հետագա տարիների ճակատագիրն էլ դրա հաստատումն է: Շուրջ քսան տարի՝ մինչև իր մահը, 1898 թ. օգոստոսը, Գ. Կոստանդյանն իր ստորագրությամբ այլևս ոչինչ չհրատարակեց³⁹: Քարկոծիչ իրականության մեջ ու թունալի մթնոլորտում Գ. Կոստանդյանը չկարողացավ, թերևս նաև չուզեց, հրատարակել իր մատենաշարի երկրորդ հատորը, թեև այն արդեն 1879 թ. պատրաստ էր տպագրության:

Ավելին. ճակատագիրը չխնայեց Գ. Կոստանդյանի նույնիսկ ժառանգությունը: Դեռ կենդանության օրոք նա իր շքեղ գրադարանը՝ 1540 կտոր գիտական գրքեր, կտակեց Ջմյուռնիայի հունական ուսումնարանին. ժամանակ առաջ նա Հայ ընթերցատանն ու Մեսրոպյան վարժարանին էր նվիրել գործիքներ, հազվագյուտ գրքեր ու ձեռագրեր, որոնք շատ շուտով փչացվել, կորստի էին մատնվել, և դա անամոքելի ցավ էր պատճառել նրան, մինչև անգամ հիասթափեցրել: Գ. Կոստանդյանի գերեզմանի ծաղկաթումբը դեռ չթաքամած, նրա եղբայրը՝ գիտնական-բժիշկ Պ. Կոստանդյանը այրեց բնադետ-փիլիսոփայի ամբողջ ձեռագիր ժառանգությունը և արխիվը՝ հայտարարելով, որ կատարում է հանգուցյալ եղբոր պատվիրանը, որ առավել հավանական է, քան կատարված ողբերգական քայլին տրվող այս կամ այն մեկնությունը:

Միայն մահվան առթիվ, ինչպես անցյալի մեր շատ գործիչներ, Գ. Կոստանդյանը գնահատվեց ու մեծարվեց. արևմտահայ ու արևելահայ պարբերականները, մասնավորապես «Արևելյան մամուլը»⁴⁰, շատ էջեր նվիրեցին նրա հիշատակին ու գնահատությանը: Գ. Կոստանդյանը, այդպիսով, ճանաչվեց ու ըմբռնվեց ետմահո՝ իր երկը երևան գալուց շատ տարիներ հետո: Դրանով արդեն հերքվում է վերոհիշյալ այն պնդումը, թե նրա գործունեությունը և գաղափարախոսությունը վաղաժամ էին հայ իրականության համար:

Հայց Գ. Կոստանդյանն իրական, ավելի մեծ ճանաչում ու համբավ ստացավ արդեն մեր օրերում: Հայ հասարակական, մասնավորապես փիլիսոփայական մտքի պատմաբանները շերմ երախտագիտությամբ գնահատեցին բնագետ-փիլիսոփայի երախտիքը, «Մեթոդի վրա» գիրքը տեղ գտավ XIX դ. հայ հասարակական մտքի հուշարձանների շարքում⁴¹: ՀՍՍՀ գիտությունների

³⁹ Մենք կարծում ենք, որ նա թարգմանական նյութեր է հրատարակել «Մետեորա» հանդեսում, 1880 թ. (տե՛ս Մ. Հակոբյան, «Մետեորա» հանդեսը, Երևան, 1977, էջ 267—273):

⁴⁰ Տե՛ս «Արևելյան մամուլի» 1901 թ. ապրիլի, մայիսի և սեպտեմբերի համարները, էջ 388—392, 401—411, 783—788 և հետո:

⁴¹ Ա. Կարինյան, Արևմտահայ լուսավորիչները 60—70-ական թվականներին (ՀՍՍՀ ԳԱ «Ճանդակագիր», հաս. գիտ., 1944, № 6—7), Գ. Գասպարյան, Գալուստ Կոստանդյանի փիլիսոփայական-աթեիստական հայացքները (նույն տեղում, 1955, № 9), Զ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, Երևան, 1959, հ. 3, Բ. Իսայան, Գալուստ Կոստանդյան, Երևան, 1965, Ա. Բեկոսյան, Հայ տրամաբանական միտքը XIX դարում, Երևան, 1976, տե՛ս նաև՝ Խ. Մամբյանի «Գիտական բարեխղճության մասին» գրախոսականը «Սովետական Հայաստան» թերթի 1948 թ. հունվարի 3-ի համարում:

ակադեմիան, ավելի քան ութսուն տարի հետո՝ 1961 թ., Գ. Կոստանդյանի «Մեթոդի վրա» երկը, որի առաջին հրատարակությունը գրադարանային հազվագյուտ նմուշ էր դարձել, վերահրատարակեց՝ ընդարձակ առաջաբանով և գիտական պատշաճությամբ⁴²։

ГАЛУСТ КОСТАНДЯН И ЕГО КНИГА «О МЕТОДЕ»

МИКАЕЛ АКОПЯН

Резюме

Еще в юные годы Г. Костандян (1840—1898) развернул научно-просветительскую работу в армянской колонии Смирны (Турция). Он издал 16 брошюр по отдельным отраслям науки, выдвинул идею создания общества для распространения научных знаний.

Общаясь с демократическими деятелями и выступая на страницах демократической печати, с 60-х гг. XIX в. он целиком и полностью посвятил себя научной деятельности. В 1878 г. Г. Костандян издал свой основной труд «О методе» — первый том задуманной им серии «Восточная научная книга». Рассматривая путь, пройденный человечеством, Г. Костандян на основе достижений естественных наук, проявив материалистический подход, достигает воинствующего атеизма и провозглашает величайшую роль и значение науки. Книжке «О методе» и его автору клерикальными кругами была объявлена настоящая война.

Преодолев идеализм, Г. Костандян, однако, так и не смог освободиться от позитивистских взглядов, хотя очевидно и то, что он своеобразно воспринял и использовал позитивистские идеи, был сторонником так называемого «левого» крыла позитивизма, возглавляемого Э. Литтре, в журнале которого в 1879 г. он издал свою программу распространения позитивных знаний и социальных наук на Востоке.

⁴² Գալուստ Կոստանդյան, Մեթոդի վրա (տեքստը պատրաստեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Գ. Ն. Գալուստյանը), Երևան, 1961։